# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

✱ 25 Յունիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, քարոզեց Տ. Միւռոն Վրդ.՝ «Քանզի ոչ էք ընդ օրինօք, այլ՝ ընդ շնորհօք» բնաբանով. Ան, ըսաւ, թէ մարդկութիւնը պէտք է ինքզինք ձերբազատէ օրէնքի տակ մըտնելէ, օրէնքով կառավարուելէ և մտնէ Շնորհքի ներքև — եղբայրական սիրոյ գործակցութեամբ։

✱ 2 Յուլիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, քարոզեց Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Իսրայէլեան, «Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ» (Մատթ. ԺԲ. 30)։ Բացատրեց բնաբանին մէջ պահանջուած բացարձակ հաւատարմութեան սկզբունքը, իբրև փրկութեան միակ ճամբան։

✱ 6 Յուլիս Եշ. — Տօն Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ. Ս. Պատարագը մատոյց Ս. Թարգմանչաց Վարժ.ի Տեսուչ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ., և քարոզեց ու բացատրեց թէ Քրիստոնէական ոգին նախ յայտնուեցաւ իր ամենապարզ ձևին մէջ, և երբ տարածուեցաւ զանազան ազգերու մէջ, իւրաքանչիւր ազգը իր մտքին և ձգտումներուն համեմատ սկսաւ ձև և մարմին տալ այդ ոգիին։ Հայ ստեղծագործ միտքը և Քրիստոնէական ոգին իրար միացած՝ ստեղծեցին մեր պատմութեան և ցեղին տևական արժէքները, ինչպէս մեր Գրականութիւնը, Ճարտարապետութիւնը և Երաժշտութիւնը, որոնց մէջ հաւատարապէս կը ցոլանան Քրիստոնէական ոգին և մեր ազգային միտքն ու նկարագիրը։

✱ 16 Յուլիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Նորայր Վրդ., «Վա՜յ անօրինին, չարիք ըստ գործոց ձեռաց իւրոց անցցեն ընդ նա» (Ես. Գ. 11) բնաբանով։ Պարզեց պատկերը այն ահաւոր դատապարտութեանց զոր անպայման պիտի կրեն չարերը, և եզրակացուց որ բարութիւն և բարեգործութիւն ապահովագոյն ճամբան են կեանքի մէջ։

✱ 23 Յուլիս Կիր. — Վարդավառ. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբայ Մայր Տաճարին Աւագ Սեղանին վրայ։ Քարոզեց Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Իսրայէլեան, «Ամբարձին զաչս իւրեանց, և ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս» (Մատթ. ԺԷ. 8)։ Եզրակացուց թէ մարդիկ իրենց կեանքի վճռական վայրկեաններուն պէտք է տեսնէին միայն զՅիսուս և տեսնուէին միայն Անոր հետ, գտնելու համար իրենց կեանքի ուղիղ ճամբան։

✱ 24 Յուլիս Բշ. — Վարդ.ի մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ. քարոզեց Տ. Հայկազուն Վրդ., հետևեալ բնաբանով. «Ոյք վարէին արտասուօք, ցնծութեամբ հնձեսցեն»։ Խօսեցաւ սա գլխաւոր գաղափարներու վրայ.

ա) Թէ՝ վիշտը մարդը կը մօտեցնէ Աստուծոյ։

բ) Թէ՝ վիշտը բուն մարդը ի յայտ կը բերէ։

գ) Թէ՝ վիշտը կը ներգործէ գիտակցութեան վրայ, կը նուաճէ մարդուն կամքը որքան ալ զօրաւոր ըլլայ ան։

✱ 3 Սեպտ. Կիր. — Լուսահոգի Ամեն. Ս. Պատրիարքհօր մահուան քառասունքի առթիւ, Ս. Պատարագի միջոցին քարոզեց Մայր Տաճարին մէջ, Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Իսրայէլեան, «Գիտասջիք զի վաստակք ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն» (Կորնթ. Ա. ԺԵ. 58)։ Բացատրեց Պօղոս Առաքեալի պատգամին իմաստը մարդոց կեանքի նկատմամբ, և վեր հանեց Հանգուցեալ Ս. Պատրիարքհօր կիսադարեան բեղմնաւոր կեանքը։

✱ 17 Սեպտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Նորայր Վրդ., «Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քոյ, և ի քում ական զգերանդ ոչ նշմարես» (Մտթ. Է. 3) բնաբանին վրայ։ Հաստատեց թէ քննադատութիւնը անհրաժեշտ է ընկերային կեանքի բարւոք յառաջդիմութեան համար, շեշտելով, սակայն, որ ուրիշներու թերութիւնները ուղղել փորձելէ առաջ, մարդ պէտք է ջանայ իր թերութիւնները ուղղելու։

✱ 25 Սեպտ. Բշ. — Մեռելոց Ս. Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ. քարոզեց Տ. Հայկազուն Վրդ., հետևեալ բնաբանով. «Բարի է օր մահուան քան զօր ծննդեան» (Ժող. Է. 2)։ Ծանրացաւ աւելի սա իրողութեան վրայ թէ «յամենայնի վախճանն է գովելի»։ Մէկու մը ծնունդը կամ գործի մը սկիզբը չի կրնար յըստակ գաղափար մը տալ կատարուելիք գործին մասին։ Գնահատումները միշտ վերջը կարելի է ընել ամէն բանի։

✱ 1 Հոկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. քարոզեց Տ. Պարգև Վրդ., «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես աշխարհի» (Գաղ. Զ. 14) բնաբանով. ցոյց տուաւ խաչին զօրութիւնը և խաչին նշանակութիւնը. բացատրելով խաչին պարծանքը, քանի որ խաչով է որ մարդիկ լուսաւորուեցան և յաղթեցին աշխարհի և անով է որ մարդիկ պիտի մօտենան Աստուծոյ որ իբրև հրեղէն սիւն մը երկինքը երկրին կը միացնէ։

✱ 7 Հոկտ. Շբ. — Տօն Գէորգայ զօրավարին. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ Եկեղեցւոյն մէջ, քարոզեց Տ. Սերովբէ Վրդ., շեշտելով սկիզբէն ի վեր հոգիի և նիւթի պայքարը մարդուն մէջ և թէ ինչպէս Քրիստոնէութիւնը վերջնականապէս հաստատեց առաջինին տևական արժէքն ու յաղթանակը և անկէ ետքը մարդոց փաղանգներ այդ ոգիին ծառայեցին և տարածեցին զայն ամբողջ մարդոց մէջ։

✱ 12 Նոյեմ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. քարոզեց Տ. Նորայր Վրդ., բնաբան ունենալով «Զի այր գուցէ՝ տացի նմա, և այր ոչն գուցէ՝ և զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ» (Ղուկ. Ը. 18)։ Ցոյց տուաւ որ ըստ երևոյթին անարդար թուող այս վճիռը՝ ճշմարիտ էր իր խորքին մէջ, և իր քանքարը օգտակար գործածութեամբ արդիւնաւորող մարդը

ձեռք պիտի բերէր աւելին, մինչ ծուլութեամբ անգործ պահողը պիտի կորսնցնէր զայն։

* 19 Նոյեմ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Հայկազուն Վրդ., նիւթ ունենալով՝ Ղուկասու Ը. 48-57 համարները. շեշտեց՝ թէ հաստատուն հաւատքն է մարդու մը բոլոր գործերու իրագործումին բանալին։

* 3 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, քարոզեց Տ. Սերովբէ Վրդ., օրուան Աւետարանին անդրադառնալով՝ բացատրեց կրօնքին գործնական արդիւնքները մարդուն կեանքին մէջ, և մասնաւորաբար աղօթքին դերը այդ կեանքը բարձրացնելու և ազնուացնելու տեսակէտէն։

* 17 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, քարոզեց Տ. Միւռոն Վրդ., «Տէր, թող զդա այս ամ եւս, մինչև շուրջ զդովաւ բրեցից և արկից աղբ, թերևս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ եւս հատցես զդա» բնաբանով։ Ան, ըսաւ, թէ մարդիկ անհրաժեշտ է որ զոհողութեան ոգին գործնականացնեն կեանքի մէջ՝ իրենց և այլոց երջանկութեան համար։

* 22 Դեկտ. Ուր. — Յղութիւն Ս. Աստուածածնի ի յԱննայէ. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Աստուածածնայ Տաճարը, քարոզեց Տ. Միւռոն Վրդ., օրուան ճաշու ընթերցուածին վրայ. ըսելով թէ Մարիամի և Եղիսաբէթի մեծ ուրախութիւնը արդիւնք էր երկարատև աղօթքի և անհուն հաւատքի. և անոնց անձերը ազնուական փոփոխութեան մը ենթարկուած էին, սիրելի Աստուծոյ։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

* 28 Հոկտ. Շբ. — Ամեն. Պատրիարք Հայրը ցաւակցական այցելութիւն տուաւ Երուսաղէմի Անգլիքան Եպիսկոպոսին՝ Քանթըրպըրիի Արքեպս.ի մահուան առթիւ։ Հեռագրով ցաւակցութիւն յայտնեց նաև Եորքի Արքեպիսկոպոսին և Տիկին Թէմփըլին։

* 3 Նոյեմ. Ուր. — Ամեն. Պատրիարք Հայրը առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Երուսաղէմի Վսեմ. Կառավարչին Ընկերակցութեամբ Տնօրէն Ժողովի Պատ. Հոգ. Անդամոց, Միաբանական Ընդհանուր Ժողովի Հոգ. Ատենապետի, Հոգ. Դիւանապետի և Հոգ. Աւագ Թարգմանի։

* 9 Նոյեմ. Եշ. — Ամեն. Պատրիարք Հայրը շնորհաւորական այցելութիւն տուաւ Ամերիկեան Ընդհանուր Հիւպատոսին, Նախագահ Ռուզվէլթի վերընտրութեան առթիւ։

Նորին Ամեն. այս առթիւ Նախագահին ուղղեց շնորհաւորական հեռագիր։

* 15 Նոյեմ. Դշ. — Ամեն. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Փալեսթայն Սօշիալ Ուէլֆըրի ընդհանուր հաւաքոյթին ընդ նախագահութեամբ Պաղեստինի Գլխաւոր Դատաւորին։

* 17 Նոյեմ. Ուր. — Ամեն. Պատրիարք Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւալանեանի, այցելութիւն տուաւ Պաղեստինի Կառավարական Վսեմ. Քարտուղարին, իր պաշտօնատան մէջ։

* 24 Նոյեմ. Ուր. — Երուսաղէմի Հ. Բ. Ը. Մ. Մասնաճիւղի կողմէ՝ Ամեն. Պատրիարք Հօր շնորհաւորութեան այցի եկան՝ Տեարք Լ. Գէորգեան, Յ. Արսէնեան և Յ. Քացախեան։

* 26 Նոյեմ. Կիր. — Ամեն. Պատրիարք Հայրը Իսլամաց Գուրպան պայրամի առթիւ շնորհաւորական այցելութիւն տուաւ Իսլամաց Գերագոյն Ժողովի բարձր պաշտօնատարներուն, Պետական Քարտուղար Րուհի Պէյ Ապտըլ Հատիի, Րաղըպ Պէյ Նաշաշիպիի, Իսմայիլ Պէյի, Իրանի, Եգիպտոսի, Իրաքի, Թուրքիոյ, Սաուտական Արաբիոյ Վսեմ. Ընդհ. Հիւպատոսներուն։

* 30 Նոյեմ. Եշ. — Երուսաղէմի Ղպտոց Եպիսկոպոս Գեր. Տ. Թէոփիլոս, շնորհաւորական այցի եկաւ Ամեն. Պատրիարք Հօր։

* 7 Դեկտ. Եշ. — Ամեն. Պատրիարք Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Աւագ-Թարգման Տ. Գրիգոր Արեգայի ներկայ գտնուեցաւ Y. W. C. A.ի տարեկան Bazaarին, և բացման աղօթքը արտասանեց։

* 11 Դեկտ. Բշ. — Ամեն. Պատրիարք Հայրը Երուսաղէմի Վսեմ. Փոխ-Կառավարչի հրաւէրով, ներկայ գտնուեցաւ Բեթղեհէմի Ս. Ծննդեան Այրին մէջ Յունաց Ամեն. Պատրիարքի և Ֆրանչիսկեան Միաբ. Գեր. Կիւսդոտի հետ, խորհրդակցելու Ս. Այրի նորոգութեան մասին։

— Ամեն. Պատրիարք Հօր շնորհաւորական այցի եկաւ ընկերակցութեամբ Երուսաղէմի Գեր. Սթուարթ Եպիսկոպոսի, Արքայական Բանակի Մերձաւոր Արևելքի ընդհ. երիցապետը։

* 14 Դեկտ. Եշ. — Պաղեստինի Գլխաւոր Դատաւոր Վսեմ. W. J. Fitz-Gerald, շնորհաւորական այցելութիւն տուաւ Ամեն. Պատրիարք Հօր։

* 18 Դեկ. Բշ. — Երուսաղէմի Կառավարիչ Պ. Փոլլօք, ընկերակցութեամբ՝ Քարտուղար Պ. Մանթուրայի, իր առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Պատրիարք Հօր։

## ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՍՈՒՐԲ ԱԹՈՌԷՆ ՆԵՐՍ

Դեկտ. 9ին Ս. Յակոբայ Տաճարին մէջ, Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի օրհնութեամբ Ուրար ընդունեցան Ժառ. Վարժ.ի Դ. դասարանի եօթ աշակերտները, աւելի լայն չափով իրենց ջերմ ու գեղեցիկ մասնակցութիւնը բերելու Ս. Աթոռոյ և Սեղանի ծառայութեան։

Ուրար կրելու առանձնաշնորհեալներն են.

Տիրացու՝ Օհան Մարուքեան, Պետրոս Լէփէճեան, Վարդավառ Սիմոնեան, Նշան Թոռունեան, Ստեփան Տ. Ստեփանեան, Պետրոս Գազանճեան, Մանուկ Սմբատեան։ — Սիոն սիրալիր կը շնորհաւորէ զիրենք, մաղթելով իրենց ապագայ աւելի բարձր աստիճաններ սրբազան այս ասպարէզին մէջ, ի փառս Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ս. Աթոռոյ։

Նոյն օրը դարձեալ Գեր. Տ Ռուբէն Արքեպս. Մանասեանի միջոցաւ դպրութեան չորս աստի-

ճաններ ստացան Ժառ. Վարժ.ի առաջին դասարանի աշակերտները։

**Սիոն**, անոնց եւս կը յայտնէ իր սրտալիր շնորհաւորութիւնները ապագայ աւելի բարձր աստիճաններու մաղթանքով, եւ Նորին Ամեն. Պատրիարք Հօր կողմէն շնորհակալութիւն՝ Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի, Ս. Աթոռոյ մատուցած այս ծառայութեան համար։

---

## ԺԱՄԱՆՈՒՄ
## ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՒ ԱՆԴՐ-ՅՈՐԴԱՆԱՆԻ ԲԱՐՁՐ ԳՈՄԻՍԷՐԻՆ

Field Marshal the Viscount Gort, V. C., G. C. B., C. B. E., D. S. O., M. V. O., M. C., Պաղեստինի եւ Անդր-Յորդանանի Նորընտիր Բարձր Գոմիսէրը Երուսաղէմ ժամանեց 31 Հոկտեմբերի միջօրէին՝ Լիդդա Օդակայանէն։

Նորին Վսեմութիւն Օդակայանին մէջ կ'ընդունուի պետական եւ զինուորական բարձրաստիճան պաշտօնատարներէ, որոնք շքախումբով կ'առաջնորդեն զինք Երուսաղէմ, Allemby զօրանոցին կից պատրաստուած ընդունելութեան վայրը ուր իրեն կը ներկայացնեն 500 բարձրաստիճան քաղաքական եւ կրօնական պաշտօնականներ, հիւրեր եւ ներկայացուցիչներ։ — Նորին Վսեմութիւն զինուորական պատիւներէ յետոյ հրաժեշտ առնելով կը մեկնի իր ապարանքը։

Երեկոյեան ժամը 4ին ապարանքի սրահին մէջ տեղի կ'ունենայ «Երդման» պաշտօնական արարողութիւնը ի ներկայութեան հրաւիրուած պետական, զինուորական եւ հոգեւորական բարձրաստիճան պաշտօնատարներու։

Հրաւիրեալները իրենց տեղերը գրաւելէ յետոյ, Նորին Վսեմութիւն ճիշտ ժամը 4ին մուտք գործելով սրահը կանգ կ'առնէ պատրաստուած բեմին կեդրոնը իր աթոռին առջեւ աջ կողմը ունենալով Պաղեստինի Գլխաւոր Դատաւորը իսկ ձախ կողմը Պետական Քարտուղարը։ Երուսաղէմի Անգլիքան Գեր. Եպիսկոպոսի յատընկայս արտասանած աւուր պատշաճի աղօթքներէն յետոյ, Պետական Գործադիր Ժողովի Քարտուղարը կը կարդայ Արքայական Հրովարտակը որուն կը յաջորդէ Արաբերէն եւ Եբրայեցերէն թարգմանութիւններուն ընթերցումը։

Նորին Վսեմութիւն յետոյ կը կատարէ իր հանդիսաւոր՝ գրաւոր երդումը՝ երրեակ մասերով ամէն անգամ համբուրելով Ս. Գիրքը եւ յետոյ մի առ մի կը ստորագրէ։ Իր ստորագրութենէն յետոյ կը ստորագրէ նաեւ Գլխաւոր Դատաւորը ի վկայութիւն։

Գլխաւոր Դատաւորը կ'արտասանէ իր «Բարի Գալուստի» խօսքը, յանուն Պաղեստինի եւ Անդր-Յորդանանի ժողովականներուն, որուն կը պատասխանէ Նորին Վսեմութիւն զգայուն եւ վճռական շեշտով։

Նոյն օրը, Երդման հանդէսէն վերադարձին, Նորին Ամեն. Պատրիարք Հայրը Երուսաղէմի Ս. Աթոռին եւ Պաղեստինի Հայ ժողովուրդին կողմէն բարի գալուստի նամակ մը կ'ուղղէ Նորին Վսեմութեան, որուն պատասխանն է հետեւեալը.

**GOVERNMENT HOUSE**
**JERUSALEM**

4th November 1944

Your Beatitude,

Your letter welcoming me to Palestine has given me the greatest pleasure and I hasten to tell Your Beautitnde how much I appreciate, not only your kind thought in writing to me, but also the assurances of loyalty your letter contains.

I have the honour to be
Your Beatitude's
Obedient Servant
GORT
High Commissioner

His Beatitude The Armenian Patriarch
Armenian Patriarchate
Jerusalem

---

## ՄԵԿՆՈՒՄ
## ԳԵՐ. Տ. ՌՈՒԲԷՆ ԱՐՔ. ՄԱՆԱՍԵԱՆԻ

Դեկտ. 14ին Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանը վերադարձաւ Պաղտատ, չորս ամիսներ Ս. Աթոռոյ հրաւիրեալ եւ պատուակալ հիւրը ըլլալէ վերջ։

Նորին Սրբազնութիւնը Հանգուցեալ Մեսրոպ Պատրիարքի մահուան տխուր առիթով հրաւիրուեցաւ Ս. Աթոռ, ու մեկնեցաւ երբ Պատրիարքական ընտրութեամբ կը վերցուէր սուգի քօղը եւ Ս. Աթոռը կը վերագտնէր իր խաղաղութիւնը։

**Սիոնի** այս էջերէն, յանուն Նորին Ամենապատուութեան Պատրիարք Հօր եւ բովանդակ Միաբանութեան, կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը Գեր. Տ. Ռուբէն Սրբազանին, որ չորս ամիսներ շարունակ, եղբայրական զգացումներով բաժնեց մեր վիշտն ու խռովքը եւ նախանձախնդրօրէն ու բարեմտաբար աշխատեցաւ մեզի հետ միասին, այս դարաւոր Հաստատութեան վերադարձնելու իր լուսաւոր օրերը։ Սրբազան Հօր անկողմնակալ ոգին, քաղցր ու ընկերական բնաւորութիւնը, եւ այս Հաստատութեան եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ փառքին ու պատուին ի նպաստ իր կեցուածքը սիրելի եւ մեծարելի ըրին զինքը Ս. Աթոռոյ բովանդակ Միաբանութեան։

Դեկտ. 10ին ի պատիւ Նորին Սրբազնութեան, Ամեն. Պատրիարք Հայրը ողջերթի փառաւոր ճաշկերոյթ մը տուաւ։ Խօսք առին Պատրիարք Հայրը եւ Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, Սրբազանին յայտնելու իրենց եւ բովանդակ Միաբանութեան յարգանքն ու շնորհակալիքը, մաղթելով նոյն ատեն որ այդ բաժանումը երկար չտեւէ, եւ մենք նորէն քաղցր պատեհութիւնը ունենանք վայելելու Նորին Սրբազնութիւնը մեր մէջ։